



ԲՆԱՊԱՐԴԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հասցե՝ Չարենց 46

Email: info@aarhus.am

Հեռ.՝ /+37411/ 81 85 93

ՌԵՕԿ_15/06
13_04_2015

ՀՀ բնապահպանության
նախարար պարոն
Արամայիս Գրիգորյանին

Հարգելի պարոն նախարար

Մենք տեղեկացանք, որ Հայաստանի Հանրապետության 10 քաղաքներ միացել են Եվրամիության քաղաքապետերի համաձայնագրին (Соглашение МЭР-ов), ըստ որի այդ քաղաքները պետք է մինչև 2020թ. կրճատեն ջերմոցային գազերի արտանետումները իրենց աշխարհագրական տարածքից առնվազն 20%-ով:

Խնդրում ենք հայտնել, թե որո՞նք են այդ քաղաքները և ինչպե՞ս ու ի՞նչ միջոցներով են կրճատելու արտանետումները:

Սույն հարցադրումը պայմանավորված է նրանով, որ ըստ նշված համաձայնագրի քաղաքապետերը պարտավորվում են քաղաքացիական հասարակության ներգրավմամբ մշակել գործողությունների ծրագիր՝ ուրվագծելով հստակ քաղաքականություն և համապատասխան միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կլինեն իրականացնել վերոնշյալ համաձայնագրի նպատակներին հասնելու համար: Գործողությունների ծրագրերը կմշակվեն յուրաքանչյուր տարածքում և դրանք պետք է ներկայացվեն «Քաղաքապետերի համաձայնագիր» նախաձեռնության գրասենյակին, համաձայնագիրը ստորագրումից հետո մեկ տարվա ընթացքում:

Խնդրում ենք հայտնել նաև արդյո՞ք տարվում են համապատասխան աշխատանքներ այդ պլանների մշակման ուղղությամբ, միաժամանակ հայտնում ենք մեր պատրաստակամությունը այս գործընթացի վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկման և ներգրավման հարցերում:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով՝

Երևանի Օրհուս կենտրոնի
համակարգող

Միլվա Այվազյան